

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

3.1. Դրամավարկային հիմնական ցուցանիշներ

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի նախնական տվյալների փողի բազան 2001թ. մայիսի վերջի դրությամբ կազմել է 63693 մլն. դրամ: Տարեսկզբի նկատմամբ այն նվազել է 8697 մլն. դրամով կամ 12,0%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել համապատասխանաբար՝ 11561 մլն. դրամով կամ 22,2%-ով:

2001թ. մայիսի վերջի դրությամբ փողի զանգվածը կազմել է 149047¹ մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ նվազել՝ 2606 մլն. դրամով կամ 1,7%-ով, 2000թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է համապատասխանաբար՝ 37004 մլն. դրամով կամ 33,0%-ով, իսկ ապրիլի վերջի նկատմամբ աճել է համապատասխանաբար՝ 2803 մլն. դրամով կամ 1,9%-ով: Ապրիլի նկատմամբ նշված փոփոխությունը պայմանավորված է զուտ ներքին ակտիվների և զուտ արտաքին ակտիվների աճով՝ համապատասխանաբար 966 և 1837 մլն. դրամով:

2001թ. մայիսի վերջի դրությամբ փողի զանգվածի կառուցվածքում աճ է գրանցվել բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի և ժամկետային, խնայողական և արտարժույթով ավանդների համապատասխանաբար՝ 4,1%-ով (2014 մլն. դրամով), և 1,9%-ով (1640 մլն. դրամով), իսկ ցպահանջ ավանդները նվազել են 6,5%-ով (851 մլն. դրամով): Ընդ որում, ժամկետային, խնայողական և արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը փողի զանգվածում 2001թ. մայիսի վերջի դրությամբ կազմել է 57,9% և տարեսկզբի համեմատ աճել է 5,0 տոկոսային կետով:

Փողի զանգվածն ըստ բաղադրատարրերի

(ամսվա վերջի դրությամբ, մլն. դրամ)

	2000թ. դեկտեմբեր	2001թ.				
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս
Փողի զանգված, ընդամենը	151653	143878	140424	144986	146244	149047
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	104,4	94,9	97,6	103,2	100,9	101,9
%-ով ընդամենը այդ թվում՝	100	100	100	100	100	100
Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամ	59485	48128	47351	46904	48550	50564
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	116,8	80,9	98,4	99,1	103,5	104,1
տեսակարար կշիռը փողի զանգվածում	39,2	33,5	33,7	32,3	33,2	33,9
Ցպահանջ ավանդներ	11909	13234	12324	12164	13100	12249
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	83,0	111,1	93,1	98,7	89,6	93,5
տեսակարար կշիռը փողի զանգվածում	7,9	9,2	8,8	8,4	9,0	8,2
Ժամկետային, խնայողական և արտարժույթով ավանդներ	80259	82516	80749	85918	84594	86234
%-ով նախորդ ամսվա նկատմամբ	100,4	102,8	97,8	106,4	98,5	101,9
տեսակարար կշիռը փողի զանգվածում	52,9	57,3	57,5	59,3	57,8	57,9

1 Ընդգրկում է հաշվարկված տոկոսները:

ՀՀ ազգային արժույթով փողի զանգվածը 2001թ. մայիսի վերջին կազմել է 69149 մլն. դրամ (ներառյալ հաշվարկված տոկոսները), իսկ բանկերի կողմից ներգրավված արտարժույթով ավանդները՝ 79898մլն. դրամ: Ընդ որում, արտարժույթով ավանդները 2000թ. դեկտեմբերի վերջի համեմատ աճել են 5124 մլն. դրամով կամ 6,9%-ով և կազմել են փողի զանգվածի 53,6%-ը: Արտարժույթով դեպոզիտների տեսակարար կշիռը փողի զանգվածում 2000թ. դեկտեմբերի վերջի համեմատ աճել է 4,3 տոկոսային կետով:


Փողի զանգվածի կառուցվածքը

(%-ով ընդամենի նկատմամբ)

	2000թ.	2001թ.				
	դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս
Փողի զանգված այդ թվում՝	100	100	100	100	100	100
ազգային արժույթով	50,7	46,8	46,9	45,0	46,5	46,4
արտարժույթով	49,3	53,2	53,1	55,0	53,5	53,6

Փողի զանգվածի տարրերի դինամիկան 2001 թ. հունվար-մայիսին

մլն. դրամ



Փողի զանգվածի և բազայի վերոնշյալ փոփոխությունների արդյունքում դրամական բազմարկիչը մայիսին հավասարվել է 2,3-ի:

ՀՀ կենտրոնական բանկի ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը 2001թ. մայիսին ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանվել է 21%, ինչը նախորդ ամսվա նկատմամբ մնացել է անփոփոխ:

Առևտրային բանկերի վարկային ներդրումների դինամիկան

(մլն. դրամ)

	2000թ.	2001թ.					
	1.06	1.01	1.02	1.03	1.04	1.05	1.06
Վարկային ներդրումներ¹, ընդամենը	86757	96972	93499	91190	92111	86577	87780
<i>այդ թվում.</i>							
կարճաժամկետ	42009	39543	36390	36131	38264	36062	34902
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	48.4	40.7	38.9	39.6	41.5	41.7	39.8
երկարաժամկետ	44748	57429	57109	55059	53848	50515	52878
<i>%-ով ընդամենը վարկային ներդրումների նկատմամբ</i>	51.6	59.2	61.1	60.4	58.5	58.3	60.2
որից՝ վարկեր տարադրամով	75125	82267	77066	76044	75669	70676	71926
<i>այդ թվում.</i>							
կարճաժամկետ	36771	34984	30596	31563	33026	31525	30872
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	48.9	42.5	39.7	41.5	43.6	44.6	42.9
երկարաժամկետ	38354	47283	46470	44481	42643	39151	41054
<i>%-ով տարադրամով վարկերի նկատմամբ</i>	51.1	57.5	60.3	58.5	56.4	55.4	57.1

2001թ. հունիսի 1-ի դրությամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը կազմել են համապատասխանաբար՝ 9554 մլն. դրամ և 13554 մլն. դրամ: Տարեվերջի նկատմամբ երկարաձգված և ժամկետանց վարկերը նվազել են համապատասխանաբար՝ 776 մլն. դրամով կամ 7,5%-ով 1098 մլն. դրամով կամ 7,5%-ով:

Բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների մնացորդը տարեսկզբի նկատմամբ աճել է 5691 մլն. դրամով կամ 12,2%-ով և 2001թ. հունիսի 1-ի դրությամբ կազմել 52425 մլն. դրամ:

2001թ. հունվար-մայիսին ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառության մուտքերը կազմել են 170861,1 մլն. դրամ (մայիսին՝ 33372,7 մլն. դրամ), իսկ ծախսերը՝ 161888,7 մլն. դրամ (մայիսին՝ 33664,7 մլն. դրամ): Մուտքերը գերազանցել են ծախսերի գումարը 8972,4 մլն. դրամով, իսկ մայիսին ծախսերի գերազանցումը մուտքերի նկատմամբ կազմել է 292,0 մլն. դրամ: Արտարժույթի վաճառքից մուտքերը կազմել են 44684,3 մլն. դրամ (մայիսին՝ 7290,6 մլն. դրամ), իսկ արտարժույթ գնելու համար ծախսերը՝ 38703,4 մլն. դրամ (մայիսին՝ 8595,1 մլն. դրամ): Արտարժույթի վաճառքից մուտքերը գերազանցել են արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը 5980,9 մլն. դրամով, իսկ մայիսին արտարժույթ գնելու համար ծախսերի գումարը գերազանցել է արտարժույթի վաճառքից մուտքերի գումարը 1304,5 մլն. դրամով:

¹ Ընդգրկված չեն երկարաձգված և ժամկետանց վարկերը